

# Շիրակի ուսուցիչների միություն գիտակրթական կենտրոն ՀԿ

## Ուսուցիչների վերապատրաստում

### Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Աշխարհագրության ուսուցման ժամանակակից մեթոդները և կիրառման առնաձևահատկությունները

Վերապատրաստող՝ Ա. Ներսիսյան

Վերապատրաստվող՝ Վ. Վարդանյան

Առարկա՝ Աշխարհագրություն

Գյումրի 2022

## Բովանդակություն

Ներածություն -----	3
ԳԼՈՒԽ 1. Աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների համակարգ ---	5
1.1 Աշխարհագրության ուսուցման մոդուլային տեխնոլոգիա -----	8
1.2 Հենարանային տրամաբանական սեղմագրի տեխնոլոգիա -----	12
1.3 Ուսումնախաղային տեխնոլոգիաներ -----	16
ԳԼՈՒԽ 2. Աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների կատարելագործման հնարավորությունները -----	19
Եզրակացություն -----	23
Գրականության ցանկ -----	24

## **Ներածություն**

**Թեմայի արդիականությունը:** Ժամանակակից դպրոցի դասում փոխազդում են ուսումնական գործընթացի բոլոր հիմնական տարրերը՝ դրա նպատակները, բովանդակությունը, միջոցները, մեթոդները և կրթության կազմակերպման ձևերը: Դասին ստեղծագործական մոտեցումը ենթադրում է դրա նորմատիվ սկզբունքների լավ իմացություն:

Կրթության նպատակներն ու բովանդակությունը փոխվում են, ի հայտ են գալիս կրթության նոր միջոցներ ու տեխնոլոգիաներ, բայց դասը մնում է կրթության հիմնական ձևը: Այս ձևը երկար դարեր որոշեց դպրոցի դեմքը, նրա «այցեքարտն» էր: Անկասկած, ժամանակակից դպրոցը հիմնված է դասի վրա, որը որոշում է նրա սոցիալ-մանկավարժական կարգավիճակը, դերն ու տեղը թե՛ ուսուցիչների, թե՛ դպրոցականների կայացման, զարգացման գործում:

Ժամանակակից իրականության մեջ ընդհանրապես դպրոցի և մասնավորապես՝ նրանում ուսուցանվող հանրակրթական առարկաների տեղը, դերը բովանդակությունն ու ուսուցման տեխնոլոգիաներն անընդհատ պահանջ ունեն կատարելագործման: Դա պայմանավորված է մի կողմից հասարակական կյանքի կտրուկ արագացումների հետևանքով դպրոցի նկտմամբ սոցիալական պատվերի անընդհատ փոփոխությամբ: Իսկ մյուս կողմից այս համատեքստում, յուսաբանյուր առարկա կարիք ունի սեփական ուսուցման մեթոդների ու տեխնոլոգիաների անընդհատ կատարելագործման: Հենց այս հանգամանքներն էլ ընդգծում են սույն թեմային ուսուցման անհրաժեշտությունն ու այժմեկանությունը՝ կուսային աշխատանքի շրջանակներում:

**Թեմայի ուսումնասիրության նպատակը:** Թեմայի հիմնական նպատակն է ուսումնասիրել աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների համակարգը և բացահայտել այն կատարելագործելու հնարավորությունները:

**Աշխատանքում առաջադրված հետազոտական խնդիրները:** Նշված նպատակին հասնելու համար աշխատաքում առաջ են քաշվել մի քանի խնդիրներ: Մասնավորապես՝

- Ուսումնասիրել ուսուցման տեխնոլոգիաների համակարգը և տեղի ունեցող ժամանակակից փոփոխությունները,
- Դիտարկել հանրակրթական դպրոցում աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների ժամանակակից համակարգը,
- Բացահայտել աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների կատարելագործման հնարավորությունները:

Առաջադրված խնդիրները լուծելու համար օգտվել ենք վերլուծության, համադրման, համեմատաաշխարհագրական, տեսական ընդհարացման մեթոդներից:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է երկու գլխից, վերջինս բաժանված է նաև ենթագլուխներից: Իսկ վերջում ներկայացված է եզրակացություն և օգտագործված գրականության ցանկը:

Ի՞նչ է նշանակում ժամանակակից: Սա և՛ բոլորովին նոր է, և՛ անցյալի հետ կապը չկորցնելու, մի խոսքով՝ ակտուալ դաս: Փաստացի նշանակում է կարևոր, էական ներկա ժամանակի համար: Եվ, այնուամենայնիվ, արդյունավետ, ուղղակիորեն կապված երեխայի, նրա ծնողների, հասարակության և պետության շահերի հետ: Բացի այդ, եթե դասը ժամանակակից է, ապա այն, անշուշտ, հիմք է դնում ապագայի համար, երեխային նախապատրաստում է կյանքին փոփոխվող հասարակության մեջ:

## **ԳԼՈՒԽ 1. Աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների համակարգ**

Դպրոցական կրթական համակարգի զարգացման ժամանակակից փուլում անհրաժեշտություն առաջացավ որոնելու և գտնելու ուսուցման կազմակերպման նոր մեթոդներ, միջոցներ և ձևեր: Արդի ժամակահատվածում միայն ավանդական մեթոդներն արդեն բավարար չեն: Պետք է կիրառվեն ուսուցման կազմակերպման այնպիսի մեթոդներ ու ձևեր, որոնց պայմաններում հնարավոր կդառնա իրականացնել զարգացնող ուսուցման տեսությունն ու ապահովել նրա արդյունավետությունը:

20-րդ դարի վերջին տասնամյակներում արտասահամանյան մանկավարժությունից փոխառնվեց և լայն տարածում ստացավ ուսուցման գործընթացի կազմակերպման մեթոդիկաների նորովի մեկնաբանումը, որոնք կոչվեցին ուսուցման տեխնոլոգիաներ: Շատ աշխատություններում ուսուցման տեխնոլոգիան դիտվում է իբրև ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց, ուսումնական նախագիծ հստակ երաշխավորված վերջնարդյունքով: Այսինքն՝ ժամանակակից մանկավարժությունը որոնում է այնպիսի մոտեցումներ ու միջոցներ, որոնք կարող են ուսուցումը վերածել ինքնատիպ արտադրատեխնոլոգիական գործընթացի երաշխավորելով արդյունքի ստացումը:

Մանկավարժական տեխնոլոգիայի առավել լայն բացատրություն է տալիս Գ.Կ. Մելնկոն: Նա համարում է, որ մանկավարժական տեխնոլոգիան գործում է և իբրև գիտություն, և իբրև ուսուցման մեջ կիրառվող սկզբունքների և միջոցների համակարգ: Մանկավարժական տեխնոլոգիան մանկավարժական գիտության ուղղություն է, որը զբաղվում է ուսումնական համակարգերի առավելագույնս արդյունավետ կառուցմամբ և ուսումնական գործընթացի նախագծմամբ: «Մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը կիրառվում է երեք ենթամակարդակներով՝

1. ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա, որն ընդգրկում է կրթության գործընթացը ուսումնական հաստատությունում կամ ամբողջ տարածաշրջանի ուսումնական հաստատություններում,

2. մասնավոր առարկայական տեխնոլոգիա, կիրառվում է «մասնավոր մեթոդիկա»-ի իմաստով և իրենից ներկայացնում է միջոցների և մեթոդների ամբողջություն մեկ առարկայի շրջանակներում,

3. տեղային կամ լոկալ (մոդուլային) տեխնոլոգիան ուսումնական առարկայի տարբեր մասերի տեղային տեղնոլոգիան է (ինքնուրույն աշխատանքի տեխնոլոգիա, տեխնոլոգիական քարտեր և այլն):

Հետևաբար, կարելի է համարել, որ ուսումնական տեխնոլոգիան ուսուցման կազմակերպման եղանակների, ուսուցման մեթոդների, հնարների և միջոցների յուրօրինակ համակարգ է, որը պլանավորվում է ուսումնադաստիարակչական գործընթացը ապահովելով հստակ երաշխավորված վերջնարդյունք:

Ուսումնական տեխնոլոգիաների բնորոշ հատկանիշներն են՝

1. հստակ երաշխավորված արդյունքի ստացում,
2. գործընթացի ախտորոշում՝ ուսումնական գործընթացի հնարավոր թերացումների բացահայտում,
3. արագ փոխադարձ կապ,
4. ուսուցման ընթացիկ և վերջնական արդյունքների պարտադիր գնահատում,
5. ուսուցումն ըստ նմուշների,
6. ալգորիթմացում-ուսումնական խնդրի լուծում հստակ մշակված ուսումնական քայլերով,
7. կանխատեսում և ստացվող արդյունքների պլանավորում,
8. սովորողների ուսումնական աշխատանքների կազմակերպում ուսումնական խնդրի լուծման եղանակով:

Ուսուցման տեխնոլոգիաների ողջ բազմազանությունը միավորվում է երեք հիմնական խմբերում:

1. **Բացատրացուցադրական ուսուցման տեխնոլոգիա**, որի ընթացքում կատարվում է սովորողի տեղեկացումն ու զարգացումը, նրա վերհիշական գործունեության

կազմակերպումը առարկայական գիտելիքների և կարողությունների ձևավորման նպատակով:

**2. Անձնակողմնորոշիչ ուսուցման տեխնոլոգիա**, որն ուղղված է սովորողի անհատական փորձի հայտնաբերմանը: Այս ինքնուսուցումը տեղափոխվում է սուբյեկտիվ հիմքերի վրա անձի ինքնազարգացման նպատակով:

**3. Զարգացնող ուսուցման տեխնոլոգիան** ուսուցման եղանակ է, որն ուղղված է սովորողի անձնային զարգացմանը մոդոլ ներքին մեխանիզմների գործադրմանը:

Այս խմբերից յուրաքանչյուրը բովանդակում է ուսուցման մի քանի տեխնոլոգիա: Ուսուցման անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների խումբը ներառում է բազմամակարդակ ուսուցման տեխնոլոգիան, կոլեկտիվ փոխուսուցման, գիտելիքի լիարժեք յուրացման և մոդուլային ուսուցման տեխնոլոգիաները: Այս տեխնոլոգիաներով կազմակերպված ուսուցման գլխավոր նպատակը աշակերտների ինքնազարգացումն ու ինքնադաստիարակումն է: Ուսուցչի խնդիրն է բացահայտել աշակերտի կողմից ուսումնական նյութի յուրացման համար անհրաժեշտ ընտրողական ունակություններն ու դրա ուսումնասիրման դրդապատճառները:

Ուսուցման անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների կիրառումն իրագործելի է միայն հետևյալ պայմաններում՝

- ուսումնախմայական շարժառիթի ստեղծում,
- ուսումնական նյութի կառուցում ըստ իմաստային բլոկների և համապատասխան իմացական խնդրի ներկայացում,
- իմացական խնդրի առաջադրում, որն ուղղված է ոչ միայն նոր նյութի յուրացմանն, այլև աշխատանքի կատարման եղանակի տիրապետմանը,
- պրոբլեմային իրավիճակի ստեղծում, որպես պրոբլեմային խնդրի հաջող լուծման նախապայման:

**Ալգորիթմացումը** ուսումնական խնդրի լուծման եղանակ է, որը հստակ մշակում է ուսումնական քայլերի հերթականությունն ու տրամաբանությունը, կանխատեսում և պլանավորում է ստացվող արդյունքները:

**Ախտորոշել**՝ նշանակում է բացահայտել ուսումնական գործընթացի հնարավոր թերացումները, առաջացած բարդությունները և մշակել դրանց հաղթահարման ուղիներն ու միջոցները:

## 1.1 Աշխարհագրության ուսուցման մոդուլային տեխնոլոգիա

Վերջին ժամանակներում նոր, առավել արդյունավետ մեթոդների որոնման արդյունքում մշակվեց ուսուցման մոդուլային տեխնոլոգիան: Մոդուլային տեխնոլոգիայի հիմնական գաղափարն այն է, որ դպրոցականը պետք է սովորի նյութն իմաստավորել ինքնուրույն որոշակի մշակված քայլերի հերթականությամբ՝ ըստ ալգորիթմի, իսկ ուսուցիչը պետք է կառավարի նրա ուսումնառության իմացական գործընթացը: Ի տարբերություն գոյություն ունեցող մեթոդական համակարգի, որն ուղղված է «ի՞նչ և ինչպե՞ս սովորեցնել» հարցերին, մոդուլային ուսուցման տեխնոլոգիան ուղղված է «ինչպե՞ս սովորեցնել արդյունավետ» հարցին:

Մոդուլային ուսուցման տեխնոլոգիայի բաղադրիչներն են՝ մոդուլի բովանդակության նախագծում, մոդուլի և դիդակտիկ նյութերի կառուցում, սովորողների ուսումնական գործունեության ստուգման և գնահատման վարկանիշային համակարգ:

Մոդուլային տեխնոլոգիայի բնութագրիչներն են՝ ճկունություն, արագ հարմարվողականություն փոփոխվող իրավիճակում, շնորհիվ ուսուցման բովանդակության դիֆերենցման և մեթոդների լայն զուգորդման հնարավորություն:

Մոդուլայնության սկզբունքը ենթադրում է ամբողջականություն, ավարտունություն և տրամաբանականություն ուսումնական նյութի միավորների կառուցման գործում մոդուլի ձևով, որի ներսում ուսումնական նյութը տեղադրվում է ուսումնական բլոկների համակարգի ձևով:

Հետևաբար, մոդուլն իրենից ներկայացնում է նպատակային գործող հանգույց, որում միավորված են ուսուցման բովանդակությունն ու նրա տիրապետմանն ուղղված տեխնոլոգիան: Ուսումնական նյութի յուրացումը կատարվում է ուսումնական գործընթացի ավարտուն ցիկլի տեսքով: Ուսումնական գործընթացի այսպիսի իմաստավորումը ուսուցչին տեղափոխում է տեղեկատվականից ուղղորդող և խորհրդատվական դաշտ: Ուսումնական գործընթացն իրականացվում է տեխնոլոգիական քարտերի միջոցով, որոնցում արտացոլվում են ուսումնական խնդիրները, աշակերտի կամ ուսուցչի գործողությունները, ստուգման ու



գնահատման եղանակները: Ուսուցչի տեխնոլոգիական քարտերում նշված են յուրաքանչյուր դասի համար նախատեսված բլոկները: Մոդուլի բլոկները բաղկացած է երեք խմբերից՝ «մուտքի» բլոկ, «տեսական» բլոկ, «ելքի» բլոկ, որոնք իրեց հերթին խմբավորվում են ներածական և կիրառական բլոկներում:

Յուրաքանչյուր բլոկ ունի իր **դիդակտիկական գործառույթը**: «Մուտքի» բլոկն ապահովում է նյութի արդիականացումը:

**Պատմական բլոկը** կատարում է կարճ էքսկուրս դեպի հասկացության ծագման պատմությունը՝ մատնանշելով պատմագիտական հիմնախնդիրը:

**Փորձարարական բլոկ**: Կատարում է պրոբլեմի ձևավորման գործառույթը, որի լուծմանն ուղղված է ողջ մոդուլը:

**Տեսական բլոկը** բովանդակում է հիմնական ուսումնական նյութը:

**Կիրառման բլոկը** ներառում է խնդիրների և վարժությունների համակարգ գործնականում ձեռք բերված գիտելիքի կիրառման նպատակով:

«**Ելքի**» բլոկը ծառայում է յուրացված նյութի ստուգմանը:

Եթե աշակերտը չի կատարել այս կամ այն բլոկի պահանջները, ապա վերադառնում է մոդուլի այն տարրին, որում ունեցել է թերություն:

**Մոդուլի գործառական (ֆունկցիոնալ) կառուցվածքը**: Յուրաքանչյուր մոդուլ ունի հետևյալ հիմնական տարրերը՝

- 1) տեխնոլոգիական քարտեր սովորողների համար,
- 2) տեխնոլոգիական քարտեր ուսուցչի համար,
- 3) տեխնոլոգիական քարտեր դասի համար,
- 4) ինքնագնահատման թեստ՝ ըստ մոդուլի,
- 5) գիտելիքի, կարողության և հմտության մակարդակի «չափագրիչ»,
- 6) դայջեստ-հավելված գրական աղբյուրներից:

**Տեխնոլոգիական քարտերը սովորողների համար** կառուցված են նյութի բարդության տարբերակվածության սկզբունքով: Սովորողներին առաջարկվում է նյութի ուսումնասիրման երեք տարբերակ, որոնք միմյանցից տարբերվում են տեսական նյութի, գործնական աշխատանքների ու գեոնոմենկլատուրայի բարդության (ծավալի և խորության) աստիճանով: Աշակերտը ընտրում է տարբերակը իր սեփական հնարավորություններին համապատասխան: 1-ին մակարդակի տարբերակը

համապատասխանում է պետական ծրագրով նախատեսված նյութի նվազագույնին: 2-րդ (բազային) մակարդակը ապահովում է պետական ծրագրով նախատեսված պարտադիր գիտելիքները: 3-րդ մակարդակը ծառայում է և համապատասխանում խորացված ուսուցմանը:

Նյութի ուսումնասիրման նշված տարբերակված եղանակը կիրառվում է ոչ միշտ, այլ միայն խրթին և ծավալուն թեմաների ուսումնասիրման ընթացքում:

**Ուսուցչի տեխնոլոգիական քարտերը** թեմատիկ պլանավորման տեսակ են, որոնք կազմվում են մոդուլին համապատասխան: Քարտն ունի հետևյալ կառուցվածքը՝ թեմա, նպատակ, խնդիրներ, օգտագործվող տեխնոլոգիական բլոկներ և հանձնարարականներ դասի առանձին մասերի կամ տարրերի կազմակերպման համար: Քանի որ բլոկները բաժանվում են ներածական և կիրառական խմբերի, ապա տեխնոլոգիական քարտերի բովանդակության բնույթից պարզ երևում է, թե որ դասերն ունեն տեսական, իսկ որոնք գործնական ուղղվածություն: Համապատասխանաբար կատարվում է մեթոդական համակարգի ընտրություն:

**Տեխնոլոգիական քարտեր դասի համար:** Ընդգրկում է՝

1. սովորողների գործողությունների նպատակի պլանավորումը (աշակերտի գործնեության արդյունքների պլանավորում տվյալ դասի ընթացքում),
2. ուսումնասիրվող նյութի բովանդակությունը,
3. հանձնարարականներ՝ ուղղված նյութի յուրացմանը (աշակերտի գործողությունները, գիտելիքի ձեռք բերման եղանակները),
4. գնահատման չափորոշիչներ ներկայացված միավորային համակարգով, որի օգնությամբ կատարվում է ինքնաստուգում և ինքնագնահատում:

**Ինքնագնահատման թեստ ըստ մոդուլի:** Սա ինքնաստուգման եղանակ է, որը հնարավորություն է տալիս ոչ միայն վերարտադրելու թեմայի կամ մոդուլի բովանդակությունը, այլև հիմնավորելու հարցերի և առաջադրանքների մակարդակի ընտրությունը ըստ «չափագրիչի»:

**«Չափագրիչը»** բազմամակարդակ ստուգողական աշխատանք է, որը յուրաքանչյուր տարբերակում ընդգրկում է տարբեր բարդության հարցեր և առաջադրանքներ: Եթե աշակերտը գերագնահատել է իր հնարավորություններն ու ընտրել է երրորդ բարդության առաջադրանքը, բայց չի հաղթահարել այն, կատարելով միայն առաջին և

երկրորդ բարդության առաջադրանքները, ապա նա իր աշխատանքը գնահատում է «բավարար» կամ «լավ»:

**Դայջեստ-հավելվածը** գրական աղբյուրներից կատարված ծաղկաքաղ է, որը պարունակում է հետաքրքաշարժ նյութ՝ թեմայի վերաբերյալ: Մա լրացուցուցիչ նյութ է, որն ակտիվացնում է դասագործընթացը և հաղորդում տեղեկություններ, հետաքրքիր և «գունեղ» մանրամասներ, որոնք չէին կարող տեղ գտնել բուն դասանյութում: Այստեղ ընդգրկված նյութը պետք է լինի հակիրճ, արտահայտիչ և հետաքրքիր:

## 1.2 Հենարանային տրամաբանական սեղմագրի տեխնոլոգիա

Հենարանային տրամաբանական սեղմագրի (ՀՏՍ) կամ հենարանային տրամաբանական ազդանշանների (ՀԱ) տեխնոլոգիայի հիմքում ընկած է նյութի տեսողական ընկալման գաղափարը: Այն լայնորեն կիրառվում է աշխարհագրության ուսուցչի պրակտիկայում: ՀՏՍ-ի կիրառումը զգալի նշանակություն ունի աշակերտի աշխարհագրական մտածողության ձևավորման գործում: ՀՏՍ-ն հանդիսանում է խոսքի, գծապատկերի, նկարի, սիմվոլների, նշանների, սլաքների և այլնի տրամաբանական համադրություն, որում առանձնացվում են ուսումնասիրվող նյութի գլխավորն ու էականը, ակնառու են դառնում օբյեկտների և երևույթների միջև պատճառահետևանքային կապերը, ինչպես նաև ուսումնական նյութի մասերի միջև տրամաբանական կապերը: Աշխարհագրության դասերի սեղմագրման համար կիրառվում են տարբեր հենքեր՝

1. խոսքային (վառ պատկերավոր պատմումներ, նկարագրություններ, հատվածներ գեղարվեստական գրականությունից), գրաֆիկական (սխեմաներ, նկարներ, աղյուսակներ) և քարտեզագրական (քարտեզներ, քարտոսխեմաներ, ուրվագծային քարտեզներ): ՀՏՍ-ն կամ ՀՏՍ-ն ուսումնական ինֆորմացիայի կողավորված սխեմա է: ՀՏՍ տեխնոլոգիան ունի մի քանի առանձնահատկություններ՝

1. նյութի փուլային ուսումնասիրում,
2. սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման ձևերի բազմազանություն,
3. ուսումնական նյութի ներկայացման ինքնատիպ եղանակներ ընդ խոսք, սիմվոլ, սլաք, նկար,
4. անհատական և տարբերակված ուսուցման կազմակերպման հնարավորություն:

Տրամաբանական հենքերը հնարավորություն են տալիս ուսուցչին տարատեսակ եղանակներով բազմակի կրկնություններ կազմակերպել, ինչը նպաստում է ուսումնական նյութի առավել լիարժեք ընկալմանն ու յուրացմանը: Հենարանային սեղմագրերի կամ ազդանշանների տեսողական ընկալումը, դրանց վերարտադրումը գրատախտակին, աշխատանքային տետրերում, ուրվագծային քարտեզներում

տարբեր հենքերով և դրանց հիման վրա բանավոր շարադրանքի կառուցումը, զարգացնում է սովորողի հիշողության տարբեր տեսակները տեսողական, լսողական, պատկերային, ասոցիատիվ և այլն: ՀՏՍ տեխնոլոգիան բարենպաստ պայմաններ է ապահովում գիտելիքների ստուգման համար, հնարավորություն է տալիս վարել յուրաքանչյուր թեմայի յուրացման արդյունքների հստակ հաշվառում ՀՏՍ-ի կառուցման դեպքում անհրաժեշտ է պահպանել մի շարք կանոններ՝

1. որոշել դասի նպատակը իբրև պլանավորված վերջնարդյունք, որը պետք է ստուգվի դասի վերջում,
2. բաժանել ուսումնական նյութը իմաստային բլոկների և որոշել յուրաքանչյուր բլոկի բովանդակության պատկերման եղանակը (ընտրել որոշակի նշաններ, սիմվոլներ, նկարներ, այսինքն ինֆորմացիայի կողավորման սխեմատիկ եղանակներ),
3. կապակցել բոլոր իմաստային բլոկները ըստ բովանդակության և հնարավորություն տալ բացահայտելու պատճառահետևանքային կապերը ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների միջև,
4. պատկերել ամբողջ դասի բովանդակությունը մեկ ընդհանուր ՀՏՍ-ում:

ՀՏՍ-ն պետք է բավարարի հետևյալ պահանջները՝ այն պետք է լինի լակոնիկ, կառուցված մի քանի մանր տրամաբանական բլոկներից, որոնք կապված են միմյանց հետ պլաքներով: Շեշտը պետք է դրված լինի հիմնական մտքի վրա (հիմնական ուսումնական նյութը նպատակահարմար է առանձնացնել գույնով, տարբեր տեսակի գծերով, շրջանակներով, տառատեսակով և այլն): Կիրառվող պայմանանշանները պետք է ծանոթ լինեն քարտեզագրական նյութերից, դասագրքերից և աշխատանքային տետրերից: ՀՏՍ-ն իր կառուցվածքով պետք է լինի օրիգինալ կամ յուրատիպ, որպեսզի երկար մտապահվի աշակերտի տեսողական հիշողության մեջ, այն պետք է սերտ կապված լինի դասագրքի նյութի հետ, համապատասխանի նրա շարադրման տրամաբանական հերթականությանը: Դա կօգնի աշակերտին ավելի լավ հասկանալ նյութը, համադրել այն դասագրքի, ատլասի քարտեզների, ուսուցման այլ միջոցների հետ, այս նպատակով ՀՏՍ-ում նշվում է դասագրքի, ատլասի էջը, պարագրաֆի համարը, պարբերությունը, անհրաժեշտության դեպքում նույնիսկ տողերը: ՀՏՍ-ի

կառուցման հերթականությունն է՝ նյութից գլխավորի առանձնացում, հենարանային ազդանշանների ընտրություն, բլոկների միջև կապերի բացահայտում, նյութի համակարգում, իմաստային բլոկների առանձնացում գույներով: ԱՌՄ-ում առանձնացվում է ՀՏՄ-ի մի քանի տեսակ՝ տեքստային, գրաֆիկական, քարտեզագրական: Տեքստային ՀՏՄ-ն դասի ընդարձակ պլանն է, որում առանձնացված են իմաստային բլոկները, նոր հասկացությունները, եզրույթները, օրինակները և այլն, որոնք ներկայացված է բառերով, տեքստային ՀՏՄ-ում շատ քիչ են օգտագործվում սիմվոլներն ու նշանները: Առավել ընդարձակ կիրավում է գրաֆիկական ՀՏՄ կամ ՀՏՄ-ն, որն ունի տարատեսակ սխեմաների տեսք և կառուցվում են սլաքների միջոցով: Սրանք առավել վառ են արտահայտում ուսումնասիրվող նյութի կառուցվածքն ու տրամաբանությունը, օբյեկտների ու երևույթների փոխադարձ կապերը: Քարտեզագրական ՀՏՄ կամ ՀՏՄ-ում ուսումնասիրվող բովանդակությունը վրա դրվում է քարտեզագրական հիմքի վրա: Այս պիսի ՀՏՄ-ները արտացոլում են ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների տարածաժամանակային փոխադարձ կապերը: Քարտեզագրական հենքերը կիրառվում են տարածքների ուսումնասիրման ընթացքում՝ մայրցամաքների տարածաշրջանների, երկրների և այլն, օգտագործվում են սիմվոլներ, պայմանական նշաններ:

Քանի որ, ՀՏՄ-ի կիրառման տեխնոլոգիան ենթադրում է ուսուցման արդյունքների ախտորոշում, անհրաժեշտ է դիտարկել նաև ուսուցչի և աշակերտի գործնելության առանձնահատկությունները: Առանձնացվում են ՀՏՄ-ի հետ աշխատելու մի քանի եղանակներ: Հաճախ հենքերը կիրառվում են նոր նյութի բացատրման ժամանակ, այս դեպքում ուսուցիչը կառուցում է ՀՏՄ-ն գրատախտակի վրա նյութի բացատրմանը զուգահեռ: Սովորողներն արտանկարում են սեղմագիրը տետրերի մեջ հետևելով ուսուցչի խոսքին: Մեկ այլ տարբերակում, ուսուցիչը կարող է նախապես ներկայացնել դասա խոսության պլանը գրատախտակի վրա կամ էկրանին ունենալով պատրաստի ՀՏՄ: Սովորողները լսելով ուսուցչին, նաև տեսողությամբ ընկալում են նյութի բուն իմաստը:

ՀՏՄ-ի հետ կազմակերպվող աշխատանքները կարող են կրել ոչ միայն ֆրոնտալ, այլև անհատական բնույթ, երբ անհրաժեշտություն է առաջանում տալ

աշակերտներին տարբեր բարդության առաջադրանքներ կամ ստուգել նյութի յուրացման մակարդակները: Օրինակ, դասախոսության ընթացքում սովորողներին կարելի է հանձնարարել լրացնել ՀՏՄ-ի բաց թողնված կետերը (լրացնել թվային տվյալներ, աշխարհագրական նումենկլատուրա կամ անվանացանկ և այլն), նոր հասկացությունները, եզրույթները, ցույց տալ սլաքներով իրենց կողմից բացահայտված պատճառահետևանքային կապերը և այլն: Այս նպատակով աշակերտներին բաժանվում են արդեն պատրաստի ՀՏՄ-ի նմուշները, որոնք հիմք են հանդիսանում կազմակերպվող աշխատանքի համար, ընդ որում, կարող են լինել նույն ՀՏՄ-ի հիմքով տարբեր տարբերակներ, որոնցում բաց թողնված կլինեն մի դեպքում, պարզ թվային տվյալները, մյուս դեպքում եզրույթները կամ հասկացությունները, հաջորդ դեպքում սլաքները և այլն, այսինքն լրացվող կետերը պետք է ունենան տարբեր աստիճանի բարդություններ: Սովորողները, որոնք տիրապետում են նյութի կողավորման եղանակին, կարող են ինքուրույն կազմել ՀՏՄ-ը հենց դասախոսության ընթացքում: Այսպիսի սեղմագրերը ծառայում են դասախոսության ընթացքում աշակերտի աշխատանքի գնահատմանը: Հենքերը կիրառվում են նաև ինքնաստուգման և ընդհանրապես գիտելիքի ստուգման համար, երբ մտովի վերարտադրվում է սեղմագիրը, բանավոր պատասխանի ժամանակ սեղմագիրը ծառայում է որպես պլան խոսքը տրամաբանորեն կառուցելու համար: Խմբային կամ զույգերով աշխատելու պայմաններում սեղմագիրը հանդիսանում է գիտելիքի յուրացման և փոխադարձ վերահսկման միջոց:

Այսպիսով՝ ՀՏՄ-ն նպաստում է պատճառահետևանքային կապերի բացահայտմանը, կատարելագործում է տրամաբանական մտածողությունը, հնարավորություն է տալիս կատարել ինքնաստուգում և փոխադարձ վերահսկում, ձևավորում է աշխարհագրական մտածողությունը, ուստի այն նպատակահարմար է կիրառել դասի բոլոր փուլերում՝ նյութի և ընկալման, և՛ ամրապնդման և ընդհանրացման նպատակով:

### 1.3 Ուսումնախաղային տեխնոլոգիաներ

Խաղը երեխայի ակտիվ գործունեության տեսակ է, որում նրանք վերարտադրում են կյանքը, գլխավորապես իրենց շրջապատող մեծերի փոխհարաբերությունները: Խաղում արտահայտվում է երեխայի կողմից շրջակա միջավայրը ճանաչելու պահանջմունքը, զարգանում են մտավոր, կամայական և ֆիզիկական հատկանիշները, անձը ձևավորվում է որպես քաղաքացի: Հոգեբանությունը դիտարկում է խաղը իբրև մեծերի կյանք երեխայի ներգրավման ձև, երբ իրականում տարիքային առումով դա դեռ հնարավոր չէ: Համապատասխանաբար, երեխայի խաղերում մոդելավորվում է մեծերի գործունեությունը: Աշխարհագրության դասերին կիրառվում են տարբեր խաղեր՝ ուսուցողական, դերային, գործնական, համակարգչային: Գոյություն ունեն խաղերի դասակարգման տարբեր տեսակներ ըստ անցկացման վայրի դասարանային և արտադասարանային, ըստ դիդակտիկական նպատակի նոր նյութի յուրացում, գիտելիքների և կարողությունների ստուգում, ամրապնդում և ընդհանրացում, ըստ ուսուցման կազմակերպման ձևի անհատական և կոլեկտիվ: Գ. Կ. Սելևկոն ներկայացրել է մանկավարժական խաղերի հետևյալ, առավել մանրամասն դասակարգումը՝

- **ըստ գործունեության ոլորտի՝** ֆիզիկական, ինտելեկտուալ, աշխատանքային, սոցիալական, հոգեբանական,
- **ըստ մանկավարժական գործընթացի բնույթի՝** ուսուցողական, թրենինգային, ստուգողական, ընթանրացնող, իմացական, դաստիարակչական, զարգացնող, վերհիշական, ստեղծագործական, հաղորդակցական, պրոֆկոդմնորոշման, հոգեբանատեխնիկական,
- **ըստ խաղային մեթոդիկայի՝** առարկայական սյուժետային, դերային, գործարարական, նմանակման կամ իմիտացիոն, դրամատիզացման,
- **ըստ առարկայական ոլորտի՝** աշխարհագրական, երաժշտական, թաթերական, գրական-գեղարվեստական, աշխատանքային, տեխնիկական, արտադրական, մարմնամարզական, սպորտային, տուրիստական, կառավարչական, տնտեսագիտական, առևտրային,



- **ըստ մանակավարժական գործընթացի բնույթի՝** սեղանի, սենյակային, տեղանքում կազմակերպվող, համակարգչային, հեռուստատեսային, տեխնիկական, փոխադրամիջոցների կիրառմամբ և այլն:

Թեմատիկ դիդակտիկական խաղերը բազմազան են և ձևավորվել են դպրոցական աշխարհագրության շրջանակներում շոշափվող բոլոր հարցերի հիման վրա: Շատ խաղեր կրում են պրոբլեմային ուսուցման ձև, ուր աշակերտները հանդես են գալիս իբրև ընդդիմախոսներ: Նոր խաղերի ստեղծման լայն հնարավորություն է տալիս համակարգիչը: Խաղում տեղադրվում է տեղեկություն տեքստի, քարտեզի, քարտուխեմայի, վիճակագրական տվյալների ձևով, որոնք բացահայտում են երևույթի զարգացման ընթացքը տարածության ու ժամանակի մեջ: Այն հնարավորություն է տալիս աշակերտներին գործունեությունը դարձնել առավել բովանդակալից և առավելագույնս մոտեցնել իրական կյանքին: Խաղի արդյունավետությունը պայմանավորված է տեղեկատվական աղբյուրների բնույթով, թե որքանով դրանք հնարավորություն կտան աշակերտին կատարել ուսումնասիրություն և հետևողություն: Ուստի, խաղի ընտրությունը պետք է հիմնվի աշխարհագրության ուսումնասիրվող դասընթացի բովանդակության վրա աշակերտի անհատական հնարավորությունների հաշվառմամբ: Խաղի նախապատրաստումն ու ընթացքը: Խաղը նախապատրաստվում ու անցկացվում է երեք փուլով՝

**1-ին փուլ: Խաղի նախապատրաստումը** սկսվում է մոտ 3-4 շաբաթ առաջ (բացի սեղանի խաղերից): Այս փուլում ուսուցիչը կազմակերպում է դասարանում ինքնուրույն աշխատանք, հաղորդում է խաղի թեման, անցկացման պլանն ու խաղի պայմանները, բաշխում է դերերն ու գործառույթները: Դերային խաղերի կազմակերպման դեպքում անհրաժեշտ են խորհրդատվություններ, որոնց ընթացքում պետք է աշակերտների մոտ ձևավորել դրական վերաբերմունք խաղի նկատմամբ և ամենակարևորը վստահություն աշխատանքի հաջողվածության մեջ: Հետաքրքրության խթանմանն ու աշխատանքի արդյունավետության բարձրացմանը նպաստում է դասասենյակի կամ կաբինետի վառ ու արտահայտիչ ձևավորումը, հազեցվածությունը գունեղ քարտեզներով, ուսումնական պաստառներով և դիդակտիկական այլ պարագաներով:

**2-րդ փուլ: Խաղի անցկացումը:** Խաղի սկզբում ստեղծվում է պրոբլեմային իրավիճակ, որի լուծման ընթացքը կազմակերպվում է խաղի կանոններով ու պայմաններով, այսինքն իրականացվում է բուն խաղը:

**3-րդ փուլ: Արդյունքների ամփոփում:** Կատարվում է հետևություն, որը հիմնվում է խաղի արդյունքների, թեմայի յուրացվածության մակարդակի և ինքնուրույն ստեղծագործական մտածողության վրա: Արդյունքների վերլուծության ընթացքում ուսուցիչը նշում է խաղի ընթացքում ձեռք բերած հաջողություններն ու այն պահերը, որոնց ուսումնասիրմանը կրկին պետք է անդրադառնալ:

## **ԳԼՈՒԽ 2. Աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների կատարելագործման հնարավորությունները**

Առաջադրանքների փոփոխությամբ փոխվում է նաև առարկաների դասավանդման բնույթը: Ամենակարևոր հարցը դառնում է «ինչպե՞ս սովորեցնել», և միայն դրանից հետո՝ «ի՞նչ սովորեցնել»: Ուստի այսօր այնքան արդիական են կրթական ժամանակակից տեխնոլոգիաները, որոնք ուղղված են սովորողների գործունեության կազմակերպմանը, նրանց հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Ցանկացած տեխնոլոգիա, լինի դա արդյունաբերական, գյուղատնտեսական կամ մանկավարժական, բնութագրվում է ցանկացած բաղադրիչի համակցությամբ և բաղադրիչների հաջորդականությամբ՝ մեթոդներ, տեխնիկա, գործողություններ:

Որքան շատ են սովորողների կողմից դասի ընթացքում կատարվող ուսումնական և ճանաչողական գործողությունները, այնքան բարձր է ուսումնական աշխատանքի ինտենսիվությունը: Ուսումնական աշխատանքի ինտենսիվության աստիճանը կախված է դասի յուրաքանչյուր բույսն օգտագործելու արդյունավետությունից, ուսուցչի հմտությունից, սովորողների պատրաստվածությունից, դասարանի կազմակերպվածությունից, անհրաժեշտ սարքավորումների առկայությունից և դրա ռացիոնալ տեղադրումից և այլն: Ուժեղացված ուսուցման պայմաններում սովորողները գիտելիքները յուրացնում են հիմնականում դասարանում, իսկ տանը նյութը անգիր անելու կարիք չկա: Անգիր սովորելու փոխարեն սովորողները հնարավորություն են ստանում ավելի լավ ընկալել և համախմբել այն, կատարել ստեղծագործական առաջադրանքներ, որոնք առաջացնում են նրանց հետաքրքրությունը, լավ կատարված աշխատանքից ինտելեկտուալ բավարարվածության զգացում:

Առաջին պլան է մղվում աշակերտի անհատականությունը, ինքնաիրացման, ինքնուրույն խնդիրների լուծման կարողությունը, երիտասարդ սերնդի մոտ ձևավորվում է գիտելիքներ, վարքագծային մոդելներ, որոնք թույլ կտան նրան հաջողակ լինել դպրոցի պատերից դուրս: Ուսուցիչը պետք է կազմակերպի սովորողների գործունեությունը այնպես, որ երեխաները ցանկություն ունենան լուծել դասի խնդիրները: Ներկայումս ուսուցման մեջ օգտագործվում են տեխնիկայի և մեթոդների օգտագործում, որոնք ձևավորում են ինքնուրույն նոր գիտելիքներ ձեռք

բերելու, անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, առաջ քաշելու ունակություն: «Վատ ուսուցիչը սովորեցնում է ճշմարտությունը, բայց լավ ուսուցիչը սովորեցնում է գտնել այն», - Ա. Դիեստերվեգի այս հայտարարությունը հայտնի է բոլորին: Այնուամենայնիվ, արդյո՞ք այս դրույթը ամբողջությամբ օգտագործվում է դպրոցական աշխարհագրության հետ կապված: Սովորողի անձին դիմելը ինքնին չի կարող հանգեցնել աշխարհագրության դասերին զարգացնող կրթության գաղափարների իրականացմանը: Ժամանակակից դպրոցի նպատակը ոչ այնքան գիտելիքների հարստացումն է, որքան գործունեության մեթոդներին տիրապետելը: Աշխարհագրական կրթության որակի բարելավման համար մեծ նշանակություն ունի աշխարհագրության ուսուցչի կարողությունը՝ կազմակերպելու սովորողների ուսումնական գործունեությունը իրենց տեսական գիտելիքների գործնական կիրառման վրա և ինքնուրույն նոր գիտելիքներ ձեռք բերելու տարբեր աղբյուրներից, որոնք անհրաժեշտ են նրանց կրթական խնդիրները լուծելու համար: Սովորողների աշխարհագրական գիտելիքների որակը որպես գնահատման չափանիշ է գործում ընդհանուր ուսուցիչների համար: Աշխարհագրության առաջադրանքների և վարժությունների համակարգի ինքնուրույն կիրառման տարբեր ձևերը սովորողներին հնարավորություն են տալիս կիրառել իրենց տեսական գիտելիքները գործնականում: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ «ազիմուտ» աշխարհագրական հասկացության սահմանման իմացությունը չի օգնի անձանոթ տարածքում ճիշտ ճանապարհ գտնել, եթե դպրոցում աշխարհագրություն ուսումնասիրելիս կողմնորոշվելու գործնական հմտությունները քարտեզի, պլանի օգնությամբ, կողմնացույց, տեղային նշաններ չեն ձևավորվել և այլն: Աշխարհագրության ուսուցման գործընթացում համակարգային գործունեության մոտեցման ներդրումը հնարավորություն է տալիս հասնել աշխարհագրական կրթության բարձր որակի և սովորողներին պատրաստել իրենց աշխարհագրական գիտելիքներն իրական կյանքում և գործնականում օգտագործելու համար: Հետևաբար, այսօր կարևոր է ոչ միայն երեխային հնարավորինս շատ գիտելիքներ տալ, այլ ապահովել նրա ընդհանուր մշակութային, անձնական և ճանաչողական զարգացում, զինել նրան այնպիսի կարևոր հմտությամբ, ինչպիսին է սովորելու կարողությունը:

Իրականում սա նոր կրթական չափորոշիչների հիմնական խնդիրն է, որը կոչված է իրացնել հանրակրթության զարգացման ներուժը: Հայտնի է, որ գիտելիքը պետք է «կլանել ախորժակով», որ սովորելը պետք է հետաքրքիր լինի, որ զգացմունքները մեծ դեր ունեն մարդու գործունեության մեջ: Այն աշխատանքը, որով երեխան չի ծանրաբեռնում, կատարվում է արագ և լավ արդյունք է տալիս, ուստի դաստիարակչական աշխատանքները պետք է իրականացվեն եռանդով, ուղեկցվեն դրական հույզերով, ուրախություն պատճառեն: Դասավանդման ընթացքում ժամանակակից երեխաները սովորելու չափազանց ցածր մոտիվացիա ունեն և նվազեցված հետաքրքրություն, հատկապես այն առարկայի նկատմամբ, որը նրանք ի սկզբանե պարզ էին համարում, ինչպիսին է աշխարհագրությունը: Ինչպե՞ս է հնարավոր դրական և արդյունավետ բարելավել այս իրավիճակը, ինչպե՞ս բարձրացնել դպրոցականների մոտիվացիայի մակարդակը աշխարհագրություն ուսումնասիրելու և, համապատասխանաբար, կրթության որակը»: Ուսուցչի համար այս խնդիրն անհերքելի է, քանի որ վերջին տարիներին տարբեր պատճառներով սովորողների հետաքրքրությունը աշխարհագրության նկատմամբ նվազում է: Այնուամենայնիվ, ժամանակակից աշխարհում աշխարհագրական գիտելիքներն անհրաժեշտ են յուրաքանչյուր մարդու, ով իրեն համարում է հաջողակ, կուլտուրական, կրթված մարդ: Հետեւաբար աշակերտը ընդգրկվում է ցանկացած գործունեության մեջ, երբ դա իրեն անհրաժեշտ է, երբ ունի դրա իրականացման որոշակի շարժառիթ: Ուսումնական գործընթացում վերակառուցման դեպքում անհրաժեշտություն առաջացավ որոնել վերապատրաստման նոր ձևեր, մեթոդներ, տեխնիկա, որոնք կբարձրացնեն ուսման մոտիվացիան, կներգրավեն սովորողներին ակտիվ ուսուցման և ճանաչողական գործունեության մեջ: Այս ամենը արտացոլում է կրթական մոտիվացիայի բարձրացման խնդրի արդիականությունը, զարգացնում է դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունը կրթական գործընթացի ժամանակակից կառուցման նկատմամբ: Ի՞նչ է մոտիվացիան, այսինքն՝ գործելու մղում: Սա ֆիզիոլոգիական և հոգեբանական պլանի դինամիկ գործընթաց է, որը վերահսկում է մարդու վարքը, որոշում է դրա ուղղությունը, կազմակերպումը: Ուսումնական գործունեության մոտիվացիայի կարևոր միջոց է ուսուցչի մոտիվացված անհատականությունը, նրա մեթոդական հմտությունները, մարդկային

որակները, նվիրվածությունը իր առարկային, բարի վերաբերմունքը և սովորողների շահերի ըմբռնումը: Ուսուցչի վարքագիծը դասարանում, նրա խոսքը, տրամադրությունը, գործողությունները մեծ ազդեցություն ունեն աշակերտների վրա: Ուսուցչի պատասխանատու վերաբերմունքն իր աշխատանքին, ճանապարհորդության, տեղական պատմության և զբոսաշրջության հանդեպ սերը, դպրոցականներին ակտիվ կրթական աշխատանքին ներգրավելու ունակությունը և նրա անհատականության շատ այլ հատկություններ ակտիվորեն ազդում են դպրոցականների աշխարհագրությունն ուսումնասիրելու շարժառիթների վրա:

Համաձայն Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Դյատլով Ս.Ա. Ներկայումս մարդկությունն ապրում է տեղեկատվական պարադիգմում, որի շրջանակներում մեծ նշանակություն ունի տեղեկատվական և տեխնոլոգիական համակարգչային գործիքների ներառումը մարդու կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ուսումնական գործընթացում: Այս առումով օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել աշխարհագրության դասավանդման ժամանակ համակարգչային տեխնիկայի կիրառման առանձնահատկությունները: Այս առումով օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել աշխարհագրության դասավանդման ժամանակ համակարգչային տեխնիկայի կիրառման առանձնահատկությունները: Աշխարհագրության՝ որպես առարկայի հիմնարար առանձնահատկությունն այն տեղեկատվության ահռելի քանակն է, որը մարդը ստանում է կրթության բոլոր փուլերում՝ նախադպրոցական ընդհանուր գիտելիքներից մինչև հատուկ գիտելիքներ, օրինակ՝ ուսուցանվող բարձրագույն ուսումնական հաստատություններում ստացած մասնագիտական կրթության համատեքստում: Համակարգչային գլոբալիզացիայի ներկա պայմաններում անհնար է պատկերացնել մանկավարժական փորձի կուտակումն այս գիտական ոլորտում առանց համակարգիչների, հատուկ պահեստավորման և դասավանդման հատուկ տեխնոլոգիաների օգտագործման: Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը աշխարհագրության դասավանդման մեջ անհրաժեշտ պայման է ուսումնական գործընթացի ժամանակակից զարգացման համար:

## Եզրակացություն

- Աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների ժամանակակից համակարգը դիտարկելիս պարզ դարձավ, որ այն չնայժ հիմնականում բավարարում է ուսուցման ժամանակակից պահանջները, բայց կարիք ունի կատարելագործման:
- Աշխարհագրության ուսուցման տեխնոլոգիաների կատարելագործումն առաջին հերթին պետք է վերաբերի նորագույն տեխնոլոգիաների և ուսուցման նորագույն մեթոդների լիարժեք համակարգմանը:
- Աշխարհագրության դասերին նոր տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս զգալիորեն ընդլայնել սովորողներին տարբեր տեսակի տեղեկատվություն տրամադրելու կարողությունը, ինչպես նաև ապահովելու նոր տեղեկատվության ընկալման հասանելիությունը վիզուալիզացիայի միջոցով:
- Աշխարհագրության ուսուցման գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը սովորողներին հնարավորություն է տալիս ավելի վառ կերպով ծանոթանալ նոր հասկացություններին, սովորել աշխարհագրական առարկաներ՝ օգտագործելով տարբեր տեսանյութեր և լուսանկարներ, ինչպես նաև համախմբել ստացված նյութը հետաքրքիր ձևերով: Այս ամենը մեծապես մեծացնում է սովորողների մոտիվացիան սովորելու հարցում:
- Ուսուցման տեխնոլոգիան դիտվում է իբրև ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց, ուսումնական նախագիծ հստակ երաշխավորված վերջնարդյունքով: Այսինքն՝ ժամանակակից մանակավարժությունը որոնում է այնպիսի մոտեցումներ ու միջոցներ, որոնք կարող են ուսուցումը վերածել ինքնատիպ արտադրատեխնոլոգիական գործընթացի երաշխավորելով արդյունքի ստացումը:

## Գրականության ցանկ

1. Մինասյան Ա. <<Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա>> Երևան 2013թ.
2. «Пути совершенствования современного урока»  
[https://kopilkaurokov.ru/geografiya/prochee/puti\\_soviershienstvovaniia\\_sovriemiennogho\\_uroka\\_ghieoghrafii](https://kopilkaurokov.ru/geografiya/prochee/puti_soviershienstvovaniia_sovriemiennogho_uroka_ghieoghrafii)
3. «Пути совершенствования качества образования на уроках географии»  
<https://infourok.ru/user/kryuchkova-luiza-leonidovna/blog/puti-sovershenstvovaniya-kachestva-obrazovaniya-na-urokah-geografii-235954.html>